

վճարել, եւ Շահն ալ ասոր աթոռանիստ տեղին կործանած էր: Մելքիսեդեկ Լեհաստան եկաւ բնակեցաւ, ուր Մեսրոպ եպիսկոպոսին մահուանէն ետեւ՝ քանի մը տարի Լեմպէրկի եպիսկոպոսական աթոռը նստաւ, բայց յետոյ հրաժարեցաւ եւ Բոսորլքի-Կամենից գնաց, ուր եւ յամին 1627, Մարտ 18ին վախճանեցաւ¹⁰⁶:

Արդ յամին 1627¹⁰⁷ Յայտնութեան առաջին հինգշարթին Մելքիսեդեկ՝ հայրենի արեւելեան հայ հաւատքին յամառութեամբ յարեալ Լեմպէրկի հայ հասարակութեան կամաց հակառակ, Լեմպէրկի Հայոց եպիսկոպոս ձեռնադրեց զՆիկողայոս Թորոսեվիչ հայ քահանայն, որ դէպ ի կաթողիկէ եկեղեցի միտելուն համար քաղաքային խորհրդանոցէն կը պաշտպանուէր: Մելքիսեդեկ զինք իւր յաջորդը կարգեց եւ անոր իրաւաբանութեան ենթարկեց Լեհաստանի, Մոլտաւիոյ եւ Վալաքիոյ բովանդակ Հայերը¹⁰⁸:

Բայց այս ապօրինաւոր ձեռնադրութեամբ պատրիարքն մեծամեծ խռովութեանց եւ Լեմպէրկի մեծապէս ծաղկեալ հայ դաղթականութեան անկման հիմը դրաւ. վասն զի Թորոսեվիչ եպիսկոպոսն Յիսուսեան կրօնաւորաց հետ միացած՝ ջանաց պնդութեամբ նոյն դաղթականութիւնն ի կաթողիկէականութիւն դարձրնել¹⁰⁹: Այս միութեան անխոհեմ փորձերն ձանձրանալի եւ անհաճոյ դատեր յառաջ բերին, որոյ վերջն եղաւ՝ որովհետեւ խնդիրն ի կողմն եպիսկոպոսին վճռեցաւ, Լեմպէրկի Հայոց մեծագոյն մասին ի